

Թէնոգորտի եւ Նեստորիտի անուն կրող պատարագներն ալ պարզ նմանողութիւն են Առաքելական պատարագին: Առաջինը բոլորովին զերծ է նեստորականութենէ, եւ երկրորդն ալ շատ մեղմ ազդուած, այնպէս որ այն խոտմութեան սկիզբները ծագած ըլլալու է, երբ զեռ յունախօս հետեւողներ ալ ունէր հռովմէական կայսրութեան մէջ, ինչպէս կը ցուցնէ Հոգւոյն Սրբոյ կոչման աղօթից սա յաւելումը, փոխարինալ Հոգովի սրբով, որ միայն կոտանդնուպոլսոյ երկու պատարագաց մէջ կը գտնուի եւ անկէ անցած է հայերէն սովորական պատարագին: Արեւելեան ասորի ծէսը կը ներկայացնէ նաև ասորի պատարագ մը՝ որ բրիտանական թանգարանին Զ. դարէն ասորի ձեռագրի մը մէջ կը գտնուի եւ զոր Պիքքէլ լատիներէնի թարգմանած է, թէև շատ տեղ անկարելի է կարդալ՝ ձեռագիրն եղծած ըլլալով: Այս գիտնականը կը պատրաստէ Արեւելեան — ասորի պատարագի ամէն ծանօթ նիւթերուն եւ այն պատարագաց աղբերաց քննութիւն մը: Այն ասորի պատարագին ընդհանուր ձեւն ու պարունակութիւնը՝ որ Եփրեմայ ժամանակ ի գործածութեան էր՝ այս հեղինակին գրութիւններէն վերակազմել փորձած է Փրոփսթ իւր նոր զրուսթեան մէջ:

Յոյժ օգտակար գործ մը պիտի ըլլայ մեր հասէր զրագիտաց, եթէ հայ լեզուով գտնուած եւ թարգմանուած ամէն պատարագներու ի միասին բաղդատական հրատարակութիւն մը ի լոյս ընծայուէր, որ շատ դիւրութիւններ պիտի ընծայէր հնախօս եկեղեցական պատմագրաց եւ հայաբախտներուն:

Ո. Կ.



ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Հ Ի Ն Հ Ա Յ Ո Յ Բ Ո Վ

Դ ԳՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

(Շար. տես Բազմ. էջ 266)

8. — Տեսանք՝ որ Դ-Ե դարուց մեր աշխարհիկ դպրոցներն արդիւնք էին հոգեւոր առաջնորդաց ձեռնբերութեան, եւ միանգամայն թագաւորաց պաշտպանութեան ու զործակցութեան: Հետեւեալ Արշակունեաց զանուն կործանմամբ՝ պիտի ջնջուէին հասարակաց դպրոցներն ալ: Չենք կարող ըսել ճշդիւ՝ թէ ե՞րբ փակուեցան անոնք: Գիտենք՝ որ Վարդանանց օրով արդէն սկսած էին առանձնական դպրոցները՝: Եւ պատերազմն ինքնին վեր ի վայր պիտի ընէր հայ աշխարհը, առանց հետքը թողլու նախկին բարեկարգութեանց, որոց չէին կարող նպաստել խորենացւոյն թուած չարիքները: «Երեսնամեակն Վառուշտի ազատաց, եւ անթիւ նեղութիւնք ուսմաց, առուստի քաղաքաց եւ քանդուստի ամրոցաց, աւերուստի աւանաց եւ հրդեհուստի շինուածոց», որոնք միանգամայն կուտեցան Հայոց գլխին՝:

Աղբը հետ կը ծաւալի ներքին չար նախանձն ալ ուսումնականաց դէմ, որ կը խցէ զարգացման ամէն ճանապարհ, եւ որոյ մասին պիտի խօսինք յետոյ՝: Վերջապէս՝ երկրին այդ ապականութիւնը եւ զրջի մը շակաց հալածանքն ու վարատումը՝ ոչ մէկ երաշխաւորութիւն կ'ընծայեն մեզ դպրոցաց գոյութեանը 451 չարաշուք թուականէն յետոյ:

Մասնական ու տեղական հանգամանք մ'ունէր գեղեցիկ ձեռնարկը Սմբատ Բագրատունւոյ, որ Պարսից խոսքով Բ Թագաւորէն (590-627) մարդպան կը կարգուի Վրկանայ: Եւ իւր սահմանաց մէջ՝

1. Առա՛ Եր. Գ. — 2. Խոր. Գ. կը: — 3. Առա՛ Գ. Գ. Եր. Բ.

թուրքաստանի անապատին ըով՝ կը գտնէ Հայաստանէ գերեալ ժողովուրդ մը, որ «զլեզու իւրեանց մոռացան, և դպրութիւն նուազեալը», ու մնացած՝ առանց քահանայի: Ազգասիրական հոգիէն տարուած՝ ճիգեր թափեց հոն, որով «հաստատեին ի հաւատս և ուսանէին դպրոթիւն (գիր) և լեզու» և անոնց քահանայ մ'ալ առաջնորդ կը կարգէ՝ Յայտնի է՝ թէ բարւոյն և կատարեց հասարակաց դպրոցի միջոցաւ դաստիարակութեամբ:

Յետոյ կը յաջորդէ արաբական տիրապետութիւնը, որ նոյնպէս ժխտական տարր մը կը հանդիսանայ մեր կրթական գործին: Կը կանգնի Բագրատունեաց թագաւորութիւնը, որ պատերազմներով զբաղած, չի կրնար ուշ դարձնել ժողովրդեան մը տաւոր զարգացման: Արծրունիք նոյնպէս կը փառաւորութիւն թափով, և Վասպուրականը կը լեցնեն իրենց զբոսանաց տաճարներով, բայց երբեք չեն խորհրդարացոյցներ հիմնել: Չայս կը հաստատէ Գրիգոր Մագիստրոս, որ նկարագրելով արաբական քաղաքակրթութիւնը, և գիտութեանց բարգաւաճման համար անոնց ի գործ դրած հնարքներն «ի վարժարանսն և ի դպրոցսն», կը յարէ. «Չոր այժմ մերոյս սակաւ ինչ խափանեալ, Կունաց ասեմ և մերոյս ազգի, եթէ ի ծուլութենէ և եթէ յառաջնորդաց մերոց քամահելոյ՝ յարուեստիցս յայս կաղացեալ եմք», որ են աստեղարաշխութիւն, երկրաչափութիւն և բժշկականութիւն. և կը զարմանայ՝ թէ «գիրադ յերաժշտականէն ամենեկին պակասեալ գտանին»: Կը յիշէ իւր ջանքերը ճարտասանութեան ու քերականութեան վրայ, «գոր մեր բազում փոյթ յանձնին կաշեալ, ի պարականականէն և յիմաստականացն ժողովեալ զսա (որ է քերականութիւնը), և (ի) մերոցն ծերոց, արծարծեցաք վերստին»¹:

Կ'անցնինք ի Կիլիկիա, Շնորհաւույն օրերը (ժԲ դար), ուր նոյն հայրապետը կը գրէ «խրատ ուսումնականաց մանկանց»², և անոր մէջ ստէպ կը յորդորէ զանոնք ուսումնասիրութեան, առանց բնաւ

յիշելու դպրոցները. ուսկից կը հետեւի՝ որ անոնք հոն ալ դեռ գոյութիւն չունէին, այլ կ'ուսանէին առանձնական դասառու թեմեր, ինչպէս պիտի տեսնենք յետոյ: Արդէն նոյն հայրապետն առ Մանուէլ կայսր թղթին մէջ աւելի յայտնի կերպով կը հաստատէ զայս՝ ըսելով. «Ուր մեր վարժարանք ի թագաւորական պատրաստեալ հրամանաց, և կամ յոյս փառաց և պարգեաց յառաջացելոցն՝ յիմաստս»³, ակնարկելով բիւզանդական դրութեան:

Ռուբինեան թագաւորութեան օրով առանձնական ուսումը շատ զարգացած է ի Կիլիկիա, բայց դպրոցները տակաւին կը պակասին. այնպէս որ Լևոն Գ, որ նոյն տոհմէն ամենէն ուսումնասէր թագաւորն եղաւ, անած մեծ թագուհւոյն՝ Չապելի զրկաց մէջ, մասնաւոր դարմանելու համար այդ թերին, Մեծ քար կոչուած մենաստանին մէջ «տուն կարգեաց վարդապետաց՝ վստե վարժելոյ գմակելուն», կը գրէ Սամուելի շարայարողը 1272ին՝ թէ՛ որքան տեւեց այդ վարժարանը, չենք գիտեր:

Նման փորձ մը կատարուեցաւ, ուրիշ պակասութիւն մը ձեռքով, նաև Ջերմադրիւր վանքին մէջ, ուր 1328ին յիշատակագիր մը կ'ըսէ. «Է այժմ դասատոսն կարգեալ ի թագաւորին Հայոց չորրորդ Լևոնի, ի թագաւորին և պալլին Հայոց Աւշին տեառն կոռիկոսայ»: Եւ վկայուց է կրակացի Յակոբ վարժապետ՝ որ այդ ժամանակ տեղւոյդ ուսուցիչն էր: Այդ երկու դպրոցներն ալ մասնական գործեր էին, և անբաւական ազգին պիտոյից: Վերջին թուականէդ 47 տարի յետոյ կը կործանելով Ռուբինեանց զանն ալ, իւր հետ տանելով հանրային կրթութեան ամէն հետը:

Նոյն հարստութեան օրով աւելի բախտաւոր չէր արեւելեան Հայաստանն ալ,

1. Սեր. 96-7, — 2. Մագ. Քեր. հազմեթ. — 3. Զափ. 841-80, — 4. Ընդհ. 111, — 5. Սամ. 152, 6. Սեր. 547.

ուր Թ՛. Եզնկացին կը գանգատէր՝ ըսելով. «Յոյժ սրտաբեկեալ խոցիմ՝ յորժամ տեսանեմ զագգս մեր անփոյթ արարեալ զբմաստափրական ուսմանց և զհմտութենէ արհեստից բանականաց »¹ :

Բայց Ինչպէս մենեի Միխիթար Գոշի վարժունքը, որ կանոնական զլուխ մը կը բանայ Դատաստանազօրոց մէջ՝ « Յաղագս դատաստանաց մանկանց ուսուցողաց », և կը սահմանէ՝ թէ « ոչ է պարտ վարձու զմանկունս ուսուցանել », ուզելով որ որոշ ամենայն ինչ ձրի լինի. իսկ այլոց՝ կերակուր և զգեստը միայն հոգան ծնողքը, որոնք եթէ կարողութեան տէր են, զբար ինքեանց յօժարութեան ընծայ ուսուցողացն տացեն » . և աղքատներէ ոչ ինչ պահանջեն, կ'ըսէ՝² : Հաւանական չէ՝ որ այդ « ուսուցողք » առանձնական դպրոցաց դասատուներ լինին, որոնք ոչ պարտք և ոչ հնարաւորութիւն ունէին ձրի ուսուցանելու, կերակրելու և զգեստելու որբերը : Զատ են նաև ժառանգաւորաց « Վարդապետներէն », որոց մասին առանձին զիւրով մը կը խօսի հեղինակս՝³ : Կը հետևի՝ որ հասարակաց դպրոցներ կային գէթ Գանձակի կողմերը, ուր կ'իշխէին Հաթիբը ղղեկի զօրաւոր տեսրը, որոցմէ՝ վարժապետ կ'ըլլէր նուրէր Գոշն իւր Դատաստանագիրքը, և կամ Զաքարէ և իւսանէ իշխանաց ընդարձակ տիրապետութեան ներքև, որոց նոյնպէս տներինն էր օրէնսդիրս, բան թէ դրած կարծել կանոնդ ի նախատեսութիւն անստոյգ ապագային :

Բայց այնուհետև հայ ընկի հողին վրայ չեն յիշուիր հասարակաց վարժարանք, մինչև իբր ժիշ դարու սկիզբները, ուր կը հանդիպինք դարձեալ անոնց՝ Հայաստանի արևելեան կողմերը, արդիւնք Մովսէս (յետոյ կաթողիկոս) և Պօղոս վարդապետաց, որոնք քարոզութեամբ կը շրջէին երկրէ երկիր, կ'ըսէ Առաքել, և « վասն

հաստատութեան հաւատոյս և կրօնիցս մերոց հաստատեցին դպրատուն ի պատշաճաւոր տեղին »⁴ : Աստապատի և Շոթօթի մէջ, « զի ի շրջակայ գեղորէիցն անդր ժողովեսցին մանկունք առ ի յուսումն » : Ազուլիսի մէջ ալ, կը յարէ, « հաստատեցին դպրատուն », և Անդրէաս քահանայն « ի վերայ մանկանցն դպրապետ » կը կարգեն. ուր կը հաւաքուին յիսուն կամ վաթսուն մանկունք, և « տէր Անդրէասն էր վերակցոյ » անոնց, և կ'ուսուցանէր « զուսումն հասարակաց մերս եկեղեցւոյ », որպէս զի դպրութեան գործն ալ կատարէին հոգևոր պաշտամանց մէջ : Այս պատճառաւ « ամենլեւ էին կուլակք մանկանցն », ինչպէս սովորութիւն էր այն ժամանակ կղերականաց : Շահարբաս, որ 1617ին կ'այցեկէր յԱզուլիս, և կղերն ու յիշեալ մանուկներէն ընդ առաջ գնացին իրեն, տեսնելով կուլակները, համարեցաւ թէ ամենլեւ էին ազգեցնելու համար, որպէս զի Շահը չափաշտապէք անոցմէ, և բարկացած՝ սպաննել տուաւ զտէր Անդրէասն :

Այդ շրջանին Նոր Զուլայի մէջ ևս կ'երևին դպրոցներ, և բաւական ալ զօրաւոր, դատելով Զաքարիա սարկաւագի վկայութենէն, որ խօսելով համանուն վարդապետի մասին, կ'ըսէ՝ թէ Զուլայեցւոց գաղթին ժամանակ (1606ին) դեռ մօրը գիրկն էր : Եւ երբ զարգացաւ, ծնողքն « ետուն զնա յուսումն գրոց առ ջուղա յեցիսն » . և որովհետև շատ արագամիտ ու ջանասէր էր քան միւս ուսումնասիրցները, « փութով ուսաւ զսաղմոս և զպարսկան, և ապա զտառքերկան և զմարգարեական մատեանս, և զաստուածայունը գիրսն բովանդակ : Ուսաւ և գիր թոյր և ետար : Գիտէր հինգ ազգաց լեզու. այսինքն՝ հայերէն և տաճկերէն, պարսկերէն և զտուրքերէն՝ և հնդկերէն »⁵ : Այսպէս բարձր էր այդ դպրոցաց ծրագիրը, եթէ համարինք՝ որ այդ բոլորը հոն ուսաւ, և ոչ մաս մը յետոյ առանձինն :

Յովհաննապանից մէջ ալ յետոյ նոյն Զաքարիա վարդապետը, որ 1637ին առաջնորդ կը կարգուի հոն, ուրիշ բարե-

1. Հյսս. 551. — 2. Գատ. ՄԻԳ. — 3. Անդ. Գ. — 4. Առաք. 273-4 հն. — 5. Լեզուն Գաւրի ազգին, որոց մասին կը խօսի Գաւր. 353. — 6. Զաք. Գ, Ժգ.

կարգութեանց հետ «հաստատեաց և դր-
պրատունս, կը զրէ յիշեալ պատմիչը, և
զնուաստութիւն իմ կարգեաց ուսուցիչ
մանկանցն»։ որով կ'իմանանք՝ թէ վար-
դապետանոց չէր այն։ Կը բերէ հոն ջու-
ղայեցի Սիմէոն վարդապետն ալ, որ կ'ու-
սուցանէ մանկանց «տրինետ արտաբերոց»,
այսինքն ոչ սրբազան ուսումները, և իւր-
վացի 'Նիկողայոս վարդապետը, որ «ու-
սոյց զերսոժտութիւնն»¹։

Այժմու մեր ազգային կամ թաղային
դպրոցաց նախազաղափարն է՝ զոր կը
տեսնենք այդ վերջին շրջանի ցանցառ
ուսումնարանաց վրայ, որոնք կը բացուին
անհատական ձեռնարկութեամբ և կը պա-
հուին ժողովրդեան կամ մենաստանաց
օժանդակութեամբ։

Միջին դարէն սկսեալ՝ կը փոխուին
նաև ուսումնարանին, ուսուցչաց և դպրո-
ցական գործոց հին կոչումները, ինչպէս
տեսանք հոս, և աւելի ընդարձակօրէն
պիտի տեսնենք յետոյ²։

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

(Շարունակելի)

1. Զաք. Գ. Ժգ. — 2. Աստ՝ զւ. Ե, Եղ. Ա.

Ձինաստանի մէջ ազնուականութեան
ինը աստիճաններ կան. — 'Բռնկ, որ
զրեթէ կը համապատասխանէ «Դուքս»ին.
Հոն՝ «Իշխան»ին. 'Նալն՝ «Սեպուր»ին
(gentilhomme), փոքրագոյն աստիճան-
ները — որոնք են Բիւնկ-շէքոն-եի, Բի-
քոն-եի, Եիւնքի-եի և Նկըն-քի-եի, —
կը համապատասխանեն Ասպետութեան.

Ամենէն բարձր պատուանշաններէն մին
է Դեղին թաձկոնը (jaquette), որ մի-
միայն կը գործածուի՝ երբ կայսեր կ'ըն-
կերակցի անձը, Բարձրագոյն քաղաքային
նշանն է սերամարգի փետուրը, որ կը
ծածկէ գլխանոցը։

ԲԱՆՈՍՍԻՐԱԿԱՆ

ՍՊԱՃԱՆԻ ԶԱՅԱՐՄԱՅԱ ԳԱԽԱՐԸ

(Աւստրալիոյ — Պարսկան — Իսրայէլի —)

— 0 —

(Շարունակութիւն տես Բազմ. էջ 259)

Գ.

Հոգ, պարտացում և մշակութիւն. — Վարչական
կազմութիւն. — Պատիժներ. — Հարկեր. — Տնտեսա-
կան վիճակ. — Կրթական վիճակ. — Գրագրասիր-
— Գրագրեր. — Ընկերութիւններ. — Թատրոն և
երաժշտութիւն։

Հոգ, ՊԱՐԱՏԱՅՈՒՄ եւ ՄՇԱԿՈՒԹԻՒՆ. — Զա-
հարմահալ գաւառի հողը բաւական արգասանդ
է և արգասաբեր։ Նրա գոյնը զխաւորապէս կար-
միր է և երբեմն ու մասամբ էլ սև, որ տեղա-
կան բարբառով կոչուում է սիպիլի։ Հերկում են
11՝ թիզ խորութեամբ՝ վեցկիով, որ պահան-
ջում է միայն մի լուծ, այսինքն մի զոյգ հզ.
Շատ գիւղացիներ չունին հզներ. նրանք ընկե-
րանում են ունեւոր համագիւղացիների հետ և
միասին մշակում իրենց հողերը. դրանք կոչուում
են շիբիթովի։ Ընդհանրապէս արտերն երկու
տարի մշակում և մի տարի հանգիստ են տալիս։
Պարարտացնում են ոչխարի, էգ ձիւ և իշու
աղբով։ Պարարտացնելու համար գործ են ածում
հետեւեալ միջոցները. իրենց անասունները 20-30
օր պահում են արտերի վրայ. կենդանիներից գո-
յացած պարարտը զօրութիւն է տալիս հողին.
կամ վարելիս հողի վրայ հաւատարապէս աղբ են
ցրում և ապա հերկում։

Ինչպէս շրջակայ գաւառներում, նոյնպէս էլ
Զահարմահալում գիւղացիներն ունեն «աշխցան»
և «գարնցան»։ Աշխան ցանքոս սկսում են օգոս-
տոս 20-ից և վերջացնում մինչև հոկտեմբեր
30-ը։ Աշխան ցանում են ցորեն, գարի, նուշի
և չավդառ։ Գարնան ցանքոսն սկսում են Մարտի
15-ից և վերջացնում մինչև ամսավերջ։ Գար-
նան ցանում են. գարի, հաճար,՝ խաշխաշ, սի-
սեռ, քիսիւն, ոսպ, հոռալ, կտաւահատ, արեւա-
ծաղիկ, եռնջա և այլն։ Մոզորաբար ջրովի հա-
ցահարկներէրց ստանում են մէկին 10-ը, իսկ
դէմի հացահատիկներից՝ 1-ին 5։

Արտերը. — Այստեղի արտերն ընդհանրա-
պէս երկարաձև են և բաժանւում են երկու մա-